

Ըստ երկրորդ կարգի, այն է վաճառականութեամբ, գլխաւորք էին Իտալացիք՝ ի Սիստուան, առ թագաւորութեամբ Լեւոնի, յամենայն ազատ վարչութեանց եւ քաղաքաց իւրեանց, եւ յաճախագոյն Վենետկեցիք եւ Գենուացիք, առ որս առաջին պարգեւագիրք կամ պայմանք դաշանց են Լեւոնի, յամի 1201. հաւանօրէն եւ յառաջ քան զթագաւորութիւն նորա ծանօթ էր սոցա Կիլիկիա. եւ ոչ սոցա միայն՝ այլ եւ Պիզացոց, թուի թէ եւ Ամալֆիացոց, ապա եւ յոլովից այլոց՝ զորս նշանակեցաք ի տեղագրութեանն Այասոյ շահաստանի, որ չեւ եւս էր առ Լեւոնիւ հռչակեալ. այլ յարեւմտեան ծովեզերս՝ մատչէին նոքա ի Սելեւկիա, ի Կոռիկոս, ի Տաքսոն, յԱլայա, յԱտալիա, եւ այլն. եւ ի մէջերկրեայսն՝ շնորհեաց նոցա Լեւոն տեղի բնակութեան եւ եկեղեցոյ շինութեան ի Տաքսոն, ի Սիս եւ Մսիս, եւ համարձակ ազատութիւն երթեւեկի, թեթեւութիւն հարկաց եւ բաժից, եւ ոմանց՝ գրեաթէ յամենայնէ յայտոցիկ անպարտականս լինել: Եւ այս ամենայն՝ որպէս զի յօժարութեամբ եւ յաճախագոյն եկեցեն յերկիր իւր, ի բարգաւաճանս եւ ի ճոխութիւն նորին, շահավաճառին եւ ընտանութեամբ արեւմտեայ կրթագոյն ժողովրդեան, միանգամայն եւ ի հարկի ժամու՝ զօրավիզն լիցին ինքեան եւ օժանդակք՝ նաւուք եւ զինուք եւ այլովք պիտոյիք:

Ոչ յարեւմտեայց՝ միայն՝ այլ եւ յարեւելեայց՝ ընտրութեամբ հնարեցաւ Լեւոն դաշնակիցս եւ բարեկամս ունել. նախ զինքնակալն Կոստանդնուպօլսի, յորմէ եւ թագիւ պատուեցաւ. ապա ի նուաճել արեւմտեայց զմեծն զայն քաղաքամայր, զնորքնձայ կայսրն Նիկիոյ, զոր եւ տեսաք փեսայացուցեալ ի դուստր եղբօր իւրոյ: Ունէր մտերմութիւն եւ ընդ հեռաւորսն այլադէնս, ընդ Ամիրապետին Պադտատայ, եւ ընդ մերձագոյնն քան զայն՝ սուլտանն Կարնոյ (Տուրքիլ շահ): Բայց ոչ նոյնպէս ընդ

---

– Յովհաննէս արքեպիսկոպոս Սոյո (յետոյ կաթողիկոս), առ քարտուղար կայսեր, ի Պտղոմայիս.

1199 Կոնրադ արքեպիսկոպոս Մոգունտիոյ առ կայսր եւ առ Պապ.

– Ռոբերտ Մարգատ (de Margat), առ Պապ.

1201 Կառնէր ասպետ Տէտոնեան, առ Պապ եւ առ արքայն Փռանկ.

1204 Կոստանց Կամարտիաս, առ նուիրակս Պապին, ի Պտղոմայիս.

1210-11 Հեթում-Հեղի (եղբայր Ն. Լամբրունեցոյ), Արշիվալտ եւ Բաւոն, առ Պապն եւ առ Ռոնն կայսր.

1218 Ճօպին ջամբուլայ, ընդ Անդրէասայ թագաւորի յՈւնգարս:– Սոքա ամենեքեան յիշեցին յընթացս պատմութեանս. այլ անյիշատակքն եւ անծանօթք՝ աներկբայապէս բազմաթիւ եւս իցեն: